

## Դաւիթի Հարցումները

Կարդա՛  
Սաղմոս 8

Մարդը ի՞նչ է որ  
զանհիկա կը յիշես, կամ  
մարդու որդի, որ անոր  
այցելութիւն կ'ընես:  
—Սաղմոս 8. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԿԵՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնացորդաց 15-16
- Յովհաննու 12. 27-50

մը, թէ Աստուած նոյնիսկ կը հոգայ մեղաւոր մարդուն»: «Ո՛վ Տէր, ինչո՞ւ հեռու կը կենաս, նեղութեան ժամանակները կը ծածկուիս» (10. 1): Հարցում մը, որ կը մատնէ Աստուծոյ ներկայութեան կարօտը:

«Տէ՛ր, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ: Ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ» (15. 1): Այլ խօսքով, ո՞վ կրնայ ապրիլ Աստուծոյ հետ:

Դաւիթ, դժուարին հարցումներ կը հարցնէ Աստուծոյ: Ան գիտէր, թէ ի՞նչ կը նշանակէ շեղիլ ճամբէն երբ զԱստուած դուրս կը ձգէ իր կեանքէն եւ կը կորսուի իր մեղաւոր ճամբուն մէջ: Սակայն, ան աստուածպաշտութիւն կը փնտռէր երբ կը գրէր իր սաղմոսները: Ան կ'ուզէ գիտնալ Աստուծոյ կամքը դժուար հարցերու պարագային:

Դաւիթի նման դուն ալ ունի՞ս հարցումներ: Հարցո՛ւր Աստուծոյ: Աստուծոյ իջարկին վրայ ունեցած հաւատքիդ միջոցով եւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ, հնազանդէ՛ Անոր, եւ Ան պիտի առաջնորդէ քեզ իր ճամբուն մէջ:

---

Լաւ է հարցումներ ունենալը, բայց աւելի լաւ է փնտռել Աստուծոյ պատասխանները:

**Ա** փրիկեան առակ մը կ'ըսէ:— «Ան որ հարցումներ կը հարցնէ, չի կորսնցնէր իր ճամբան»: Այդ խօսքը կրնայ մեզի ալ օգտակար ըլլալ, երբ նկատի ունենանք սաղմոսերգուին հարցումները սաղմոսներուն մէջ: Ան յստակօրէն կը փնտռէ Աստուծոյ առաջնորդութիւնը իր քալած ճամբուն համար:

Նկատի ունենանք սա հարցումները, որ ան կը հարցնէ:— «Եւ դուն, ո՞վ Տէր, մինչեւ ե՞րբ» (Սաղմոս 6. 3): Անհամբեր սպասումի հարցում մը, տեսնելու համար, թէ Աստուած ե՞րբ պիտի իրագործէ իր ծրագիրը: «Մարդը ի՞նչ է, որ զանհիկա կը յիշես» (8. 4): Զարմանքի հարցում

## Աղօթել՝ Ամէն Բանէ Առաջ:

Կարդա՛  
Դ. Թագ. 19. 9-19

Հիմա դուն, ո՛վ Տէր  
Աստուած մեր, ազատե՛  
մեզ անոր ձեռքէն,  
որպէսզի երկրի բոլոր  
թագաւորները գիտնան  
թէ, միայն դուն ես  
Աստուած:  
—Դ. Թագ. 19. 19

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնացորդաց 17-18
- Յովհաննու 13. 1-20

սպառնալիքով մը: Այս անգամ Եզեկիա թագաւոր դարձաւ  
եւ դիմեց Տէրոջ: Ան աղօթեց ըսելով.— «Ո՛վ Տէր, երկրի  
բոլոր թագաւորներուն մէջ Աստուած միայն դուն ես...  
Հիմա դուն, ո՛վ Տէր Աստուած մեր, ազատե՛ մեզ մեր  
թշնամիին ձեռքէն, որպէսզի երկրի բոլոր թագաւորու-  
թիւնները գիտնան, թէ միայն դուն ես Տէր Աստուած»  
(19. 15-19): Երբ Եզեկիա այս աղօթքը ըրաւ, Աստուած  
պատասխանեց իրեն եւ հրաշանման փրկութեամբ մը  
ազատեց զինք իր թշնամիներէն (Կ. 35-37):

Սիրելի ընթերցող բարեկամ, թերեւս դուն ալ ստիպուած  
ես հարցեր դիմագրաւել, որոնք յուսահատութեան կը  
մատնեն քեզ: Թերեւս այդ մէկը գործ մը կորանցնել է,  
ընտանեկան կամ գործի դժուարութիւն մըն է, կամ  
հիւանդութեան մը դէմ մաքառիլ է: Պէտք չէ ընկճուիլ:  
Մենք ունինք Ամենազօր եւ հրաշագործ Աստուած մը,  
որուն կրնանք վստահիլ մեր մտահոգութիւնները: Ուրեմն,  
որեւէ բան ընելէ առաջ, հաւատքով աղօթք ըրէ:

---

**Աղօթքը պէտք է ըլլայ մեր առաջին միջոցը եւ ոչ  
թէ վերջին ապաւէնը:**

**Ե**զեկիա Յուդայի թագաւորներէն  
լաւագոյնը կը նկատուի: Ան  
վերահաստատեց Աստուածապաշ-  
տութիւնը իր ազգին մէջ, երբ իր  
հօրը՝ Ահազի շրջանի ժողովուրդը  
չարացած եւ Աստուծմէ հեռացած  
էր (Դ. Թագ. 18. 3-4): Այդ բոլորէն  
ետք, սակայն, երբ Ասորեստանի  
թագաւորը յարձակեցաւ Յուդայի  
վրայ, Եզեկիա թագաւոր հաւաքեց  
տաճարին ոսկիները եւ որպէս  
կողոպուտ յանձնեց Ասորեստանի  
թագաւորին զայն սիրաշահելու  
համար (Կ. 13-16):

Այսուհանդերձ, այդ ըրածը  
չգոհացուց Ասորեստանի թագաւորը,  
եւ ան երկրորդ անգամ վերադարձաւ

## Նշանառու Ախոյեան

Կարդա՛  
Փիլիպպեցիս 3. 7-14

Նպատակը դիտելով՝  
դէպի Քրիստոս  
Յիսուսով եղած  
Աստուծոյ վերին  
կոչումին՝ մրցանակին կը  
վազեմ:  
—Փիլիպպեցիս 3. 14

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Մնացորդաց 19-20  
■ Յովհաննու 13. 21-38

վերին կոչումին, մրցանակին կը վազեմ» (Փիլիպ. 3. 14): Առաքեալը կը գործածէ «նպատակ» բառը բոլոր իր մարզական պատկերներով կատարած բացատրութիւններուն՝ վազքի մրցումներուն մէջ: Նետ արձակելու պարագային դարձեալ նոյն նշանակէտը կը գործածէ: Երկու պարագային ալ մրցանակ չափը կախեալ է շիտակ կեդրոնացումէ: Հաւատացեալին համար այդ կեդրոնացումը պէտք է ըլլայ ամբողջ կեանքի տեւողութեամբ, մեր Փրկիչը եղող՝ Քրիստոսի վրայ, ջանալով միշտ իրեն նմանիլ (Հռովմ. 8. 28-29, Գաղ. 5. 22-23):

Ի՞նչ բանի վրայ կեդրոնացուցած ես այսօր քու միտքդ եւ հոգիդ: Արդեօ՞ք դուն ալ մտազբաղ ես եւ կը ջանաս կեանքդ աւելի հանդստաւէտ դարձնել: Եթէ հաւատացեալ մըն ես, զարնելու ամենէն շիտակ թիրախը քեզի համար, աւելի նմանիլն է Փրկիչդ եղող Քրիստոսի (Բ. Կորնթ. 3. 18): Այսօր վստահ եղիր, թէ շիտակ նպատակէտին նշան առած ես:

Այս կեանքի մէջ լաւագոյնդ ընելու համար, Աստուծոյ նպատակակէտը բռն նպատակակէտդ դարձուր:

**Մ** էթ էմմոնզ, ողոմպիական  
Սակիէ մետալ չահող մը, 2004-  
ին կը նշանակուի ուրիշ մրցումի  
մը՝ Աթէնքի մէջ: Ան պէտք էր կարե-  
նար եզին աչքին շիտակ զարնել:  
Սակայն սխալ բան մը պատահեցաւ:  
Ան զարկաւ թիրախին, բայց ոչ շի-  
տակ թիրախին: Այդ սխալ թիրախին  
պատճառով ան ութերորդ տեղը  
գրաւեց:

Առաքեալը Փիլիպպեցիներուն  
գրած իր նամակին մէջ կը շեշտէ  
կարեւորութիւնը կեդրոնանալու շի-  
տակ նշանակէտին, մեր հաւատաց-  
եալի կեանքին մէջ: Ան կ'ըսէ.—  
«Նպատակը դիտելով՝ դէպի Քրիս-  
տոս Յիսուսով եղած Աստուծոյ

## Ընդունելի Հերքում

Կարդա՛  
Սաղմոս 51. 1-10

Աստուած մարդուն  
Գմաց չի Գայիր, քանզի  
մարդը երեւցածին կը  
Գայի, բայց Տէրը սրտին  
կը Գայի:  
—Ա. Թագ. 16. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Բ. Մնացորդաց 21-22  
■ Յովհաննու 14

Երբեմն հաւատացեալներ ունին իրենք իրենց յատուկ «ընդունելի հերքումներ»: Մենք մեզ երբեմն անտեղեակ կը ձեւացնենք մեր գործած սխալներուն մասին, եւ պատճառաբանելով, ուրիշները կը մեղադրենք: Բայց Աստուած գիտէ ճշմարտութիւնը: Աստուածաշունչը կ'ըսէ. — «Մարդ երեւցածին կը նայի, բայց Տէրը սրտին կը նայի» (Ա. Թագ. 16. 7): Ասիկա ճշմարտութիւն է, մեր սիրտը մաքուր ըլլայ կամ ապականած շապիկով ծածկուած՝ ցոյց տալու իր անմեղութիւնը: Մենք կրնանք խաբել ուրիշները, որոնք միայն մեզ կրնան տեսնել մեր արտաքին երեւոյթով, բայց Աստուած մեր սրտէն ներս թափանցելով, կը տեսնէ իրականութիւնը — լաւ կամ գէշ: Արդ, իմաստութիւն է խոնարհաբար մեր մեղքերը խոստովանիլ մեր Տէրոջ: Անոր փափաքն է, որ մենք ընդունինք ճշմարտութիւնը (Սաղմոս 51. 6): Միակ եւ ամենաշիտակ ձեւը մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ վերահաստատելու՝ գիտակցիլ է մեր սխալներուն եւ խոստովանիլ զանոնք Աստուծոյ (Կ. 3-4):

**Մե՞նք կր՞նանք յաջողապէս խաբել ուրիշները, բայց  
Աստուած գիտէ մեր սիրտերը:**

**Յ**անցանքի մը համար ամբաստանուած քաղաքագէտ մը, հետեւեալ չքմեղանքը կը ներկայացնէ թղթակիցներուն. — «Ես այդ պատահարներէն ոչ մէկը կը յիշեմ»: Ուրիշ ամբաստանեալ մը ինքզինք պաշտպանելու համար կը դիմէ ուրիշ տեսակ ռազմավարութեան մը, որ կը կոչուի «ընդունելի հերքում»: Նման տրամաբանական թուող խուսափումի միջոցներով մարդիկ յաճախ կը փորձեն իրենց անմեղ ըլլալը փաստել՝ եղածէն եւ պատահածէն լուր չունեցող ձեւացնելով իրենք գիւրեմք: Այս ձեւով, ուրիշ անձ մըն է, որ կը մեղադրուի եւ կը դառնայ քաւութեան նոխազը:

**Վարանոտ  
Վճռակամութիւն**

Կարդա՛  
Բ. Կորնթ. 5. 16-21

Ամէն բան Աստուծմէ է,  
որ մեզ Իրեմ հետ  
հաշտեցուց Յիսուս  
Քրիստոսիմ ձեռքով, ու  
տուաւ մեզի հաշտու-  
թեան պաշտօնը:  
—Բ. Կորնթ. 5. 18

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ  
ՏԱՐՈՒՆ ԿԵՂ  
■ Բ. Մնացորդաց 23-24  
■ Յովհաննու 15

պութիւն անոր նեցուկ եղաւ զինք Ափրիկէ դրկելու որպէս միսիոնարուհի, որովհետեւ ան Ափրիկեցի-Ամերիկացի մըն էր: Ափրիկէ երթալու իր այդ երազը չիրականացաւ, սակայն ան չի յուսահատեցաւ Յիսուսի ծառայելու իր կոչին մէջ: Ան խիզախութեամբ պզտիկ դպրոց մը սկսաւ Ափրիկեցի-Ամերիկացի աղջիկներու համար՝ Տլորիտայի մէջ, որ հետզհետէ, տարիներու ընթացքին աճեցաւ ու ծաղկեցաւ, եւ մեծ Գոլէճի մը վերածուեցաւ: Մէյրի մեծ դեր ունեցաւ կիներու արժէքը բարձրաձնելու՝ ընկերութեան մէջ:

Մէյրիի կտակը դարբնուած էր Յիսուսի ծառայելու իր վճռակամութեամբ, հակառակ իր երազներուն խորտակման: Ան գիտէր, թէ Աստուած Իրեն վստահած էր «հաշտութեան պաշտօնը» (Բ. Կորնթ. 5. 18) եւ պէտք էր տեղի տար:

Այդ պատուէրը միայն Մէյրի Սըքլոտին համար չէ: Մեր բոլորին պարտականութիւնն է մարդոց խօսիլ, թէ անոնք կրնան Աստուծոյ հետ հաշտուիլ Քրիստոսի միջոցով: Նայէ՛ շուրջդ թէ դո՛ւն ինչ կրնաս ընել Յիսուսի համար:

**Մ**ուտի Աստուածաշունչի Հաստատութեան մէջ ծառայելու առանձնաշնորհումներէն մէկը լսելն էր շրջանաւարտներու մասին որոնք ազդած են մարդոց կեանքերուն վրայ՝ Քրիստոսի համար: Անոնց զոհաբերութեան պատմութիւնները, յարատեւութիւնն ու կարեկցութիւնը Աւետարանի քարոզութեան համար իսկապէս ներշնչիչ է:

19-րդ դարու աւարտին, Մէյրի Սըքլոտ Պէթիւն, երկու տարի ուսանեցաւ Մուտի Հաստատութեան Շիքակոյի բաժնին մէջ, մարզուելով Ափրիկէի մէջ միսիոնարութեան: Սակայն, շրջանաւարտութենէ ետք, ոչ մէկ միսիոնարական կազմակեր-

**Աստուած կ'ուզէ մեր մէջ տեսնել յօժարակամ սիրտ մը, որ կ'ուզէ Իրեմ ծառայել:**

## Հերոս Մը՝ Որ Բժշկեց

Կարդա՛  
Ա. Պետրոս 3. 8-17

ԱՆՈՆԵ սպառնալիքէն  
մի՛ վախճաք ու մի՛  
վրդովիք:  
—Ա. Պետրոս 3. 14

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Բ. Մնացորդաց 25-27  
■ Յովհաննու 16

կը կարդար եւ ծունկի կու գար իր անկողնին մօտ, աղօթքի համար: Իսկ կռիւի ընթացքին, պատմութիւնը ուրիշ էր:

Համաշխարհային Բ. Պատերազմին, Մայիս 1945-ի Օքի-նավայի ճակատամարտին, Տոս շատ մը անգամներ իր կեանքը վտանգեց իր վիրաւոր ընկերները փրկելու համար: Իր անձնուէր գործերուն համար ան արժանացաւ զինք քննադատողներուն եւ ծաղր ընող ընկերներուն գնահատանքին, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնց կեանքը փրկած էր:

Պետրոս Առաքեալ կ'ըսէ:— «Բայց եթէ արդարութեան համար չարչարուիք ալ՝ երանելի էք, եւ անոնց սպառնալիքներէն մի՛ վախնաք ու մի՛ վրդովիք» (Ա. Պետ. 3. 14):

Ան կը պատուիրէր, որ զԱստուած մեծարեն իրենց սիրտերուն մէջ, եւ պատրաստ ըլլան յարգալիր պատասխան տալու բոլոր անոնց, որոնք իրենց ներսիդին ունեցած յոյսին համար կը հարցնեն (Կ. 15): Թող մեր վերաբերմունքը, Քրիստոսի հանդէպ թշնամական կեցուածք ցուցաբերող մարդոց հանդէպ՝ ըլլայ միշտ Աստուծոյ սէրը ցուցաբերող:

**Բարիքի դէմ քարիք ցուցաբերելը մարդկային է: Սակայն չարիքի դէմ քարիք ցուցաբերելը՝ Աստուածային:**

**Տ**ասնապէս Տէգմոնտ Տոս առաջին առարկողն է Ծերակուտական Պատուոյ Մետալը ստանալու, որ Միացեալ Նահանգներու բարձրագոյն զինուորական պատուոյ շքանշանը կը նկատուի: Զերմեռանդ քրիստոնեայ մը, Տոս կը հաւատար, թէ շիտակ չէր ուրիշները մեռցնել: Սակայն, միւս կողմէ, ան կ'ողջէր նաեւ ծառայել իր երկրին: Ասոր համար ան որպէս բժիշկ կամաւոր ծառայութեան մէջ մտաւ: Մարզումի բանակավայրին մէջ իր զինուոր ընկերները կը ծաղրէին զինք որովհետեւ ան կը մերժէր գէնքով կրակել: Անոնք կը ծաղրէին զինք, երբ ան ամէն գիշեր իր Աստուածաշունչը

## Շնորհքի Տնտես Մը

Կարդա՛  
Ա. Կորնթ. 15. 1-11

Ամէն մէկը ինչ շնորհք  
որ առաւ, զանկա  
իրարու մատակարարե-  
ցէ՛ք Աստուծոյ զանա-  
զան շնորհքներէն, բարի  
տնտեսներու պէս:  
—Ա. Պետրոս 4. 10

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Մնացորդաց 28-29
- Յովհաննու 17

մտածումը, որ թերեւս ես ալ ազնիւ ըլլալով, նոյն վերաբերմունքը ակնկալէի ուրիշներէ:

Յաջորդ Կիրակի առաւօտ մեր եկեղեցիի ժողովուրդը երբ կ'երգէր «Հիանալի Շնորհք» երգը, յանկարծ կարծես իմ վերաբերմունքիս խիզախութիւնը ինծի յայտնուեցաւ այդ երգին բառերով:— «Հիանալի շնորհք, ինչ քաղցր ես դուն, փրկեցիր խեղճն ինձ պէս»: Ի՞նչ կը խորհէի ես: Այն շնորհքը որ մենք ցոյց կու տանք ուրիշներու, իսկութեան մէջ մերը չէ: Մեր ցուցաբերած շնորհքը մարդոց՝ Աստուած է որ տուած է մեզի: Մեր ըրածը ուրիշ բան չէ, եթէ ոչ միայն իրմէ մեր առածը ուրիշին փոխանցել:

Լաւ տնտեսութիւն կը նշանակէ մեր ունեցածը ոչ թէ մեզի պահել, այլ փնտուել առիթներ, զանոնք ուրիշներուն փոխանցելու համար՝ այն, ինչ որ Տէրը տուած է մեզի:

Մեզմէ իւրաքանչիւրս, «ինչ շնորհք որ առած ենք, պէտք է զանոնք իրարու մատակարարենք... բարի տնտեսներու պէս» (Ա. Պետ. 4. 10):

**Ա**նցեալ չաբաթ ես շատ մը առիթներ ունեցայ շնորհք ցուցաբերելու: Ես կատարեալ չէի, բայց ինծի հաճելի թուեցաւ այն վերաբերմունքս, որ ունեցայ յատուկ պարագայի մը հանդէպ: Փոխանակ բարկանալու, ըսի:— «Ես կը հասկնամ այդ մէկը ինչպէս կարելի դարձաւ որ պատահի: Անկասկած ես ալ ունեցայ սխալելու իմ բաժինս»: Եւ այդպէս վերջացուցի:

Իմ նիշադրումին համեմատ, ես բարձր նիշի մը արժանի եմ՝ ոչ հարիւր տոկոսով կատարեալ, բայց բաւական բարձր: Սակայն, կարծես մտքիս ետեւ կար ծուարած (բան մը որ չեմ սիրեր ընդունիլ) այն

Երբ կը գանչանմք Աստուծոյ շնորհքը, պիտի ուզեմք ցոյց տալ զայն մեր նմաններուն ալ:

## Ձեռք Մը Տուր Ինձի

Կարդա՛  
Սաղմոս 139. 7-12

Թող քու ձեռքդ ինձի  
օգնական ըլլայ:  
—Սաղմոս 119. 173

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԿԵԿ  
ՏԱՐՈՒՆ ԿԵԿ  
■ Բ. Մնացորդաց 30-31  
■ Յովհաննու 18. 1-18

ինձմէ աւելի երիտասարդ էր եւ զօրաւոր.— «Հասի՛ր, ձեռք մը տուր ինձի»: Բարեկամս Հասաւ մօտս, եւ իր զօրաւոր ձեռքը երկարելով բռնեց ձեռքէս եւ զիս եզերք տարաւ:

Մի քանի օրեր ետք, երբ կը կարդայի 119-րդ Սաղմոսը, Հանդիպեցայ 173-րդ Համարին.— «Թող քու ձեռքդ ինձի օգնական ըլլայ»: Յիշեցի ձկնորսութեան օրուայ այդ վախի փորձառութիւնս ու բարեկամիս օգնութեամբ փրկուիլս: Ուրիշ առիթներով ալ պատահած է, որ ես իմ տկարութիւնս չուզելով ճանչնալ կամ ընդունիլ, իմ կարողութենէս վեր գործեր ընել փորձած եմ եւ զիս ու ընտանիքիս անդամները վտանգի մէջ դրած: Թերեւս դուն ալ, դուն քեզ այսօր նման վիճակի մը մէջ կը զգաս: Օգնութեան միջոց մը կա՛յ մօտը, բարեկամ մը որ քեզմէ եւ ինձմէ աւելի զօրաւոր է: Մէկը, որուն ձեռքը կրնայ բռնել մեզ (Սաղմ. 139. 10): Սաղմոսերգուն կ'ըսէ.— «Դուն զօրաւոր բազուկ ունիս, քու ձեռքդ ուժով է» (89. 13): Խնդրէ՛ Աստուծմէ.— «Ձեռք մը տուր ինձի» եւ Ան անմիջապէս պիտի Հասնի քեզի:

Երբ նեղութիւններ հասնին մեզի, Աստուած միշտ պատրաստ է մեզ զօրացնելու:

Վերջերս ձկնորսութեան դացած էինք բարեկամներու հետ, երբ պէտք եղաւ ջուրին մէջ քալել՝ Հոսանքին դէմ, որ իմ յոգնած ոտքերուս համար քիչ մը դժուար էր: Ես պէտք էր աւելի լաւ գիտցած ըլլայի, թէ ետ դառնալը Հոսանքն ի վար աւելի դժուար պիտի ըլլար ինձի համար: Սկսայ վախի այն զգացումը ունենալ, որ մէկը կ'ունենայ երբ իսկապէս մեծ նեղութեան մը մէջ կը գտնուի: Քայլ մըն ալ աւելի առած ըլլայի, Հոսանքը զիս առած եւ տարած պիտի ըլլար:

Մտածեցի ընել այն միակ բանը, որ կրնայի ընել - Պոռացի քիչ մը անդին գտնուող բարեկամիս, որ

## Արդար 2Է

Կարդա՛  
Սաղմոս 103. 1-10

Ան մեր մեղքերուն հա-  
մեմատ չվարուցաւ  
մեզի հետ, ու մեր անօ-  
րէնութիւններուն համե-  
մատ չհատուցանեց  
մեզի:  
—Սաղմոս 103. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸՎ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ  
■ Բ. Մնացորդաց 32-33  
■ Յովհաննու 18. 19-40

**Ա**րդար չէ՛: Ասիկա ըսենք, կամ նոյնիսկ մտածենք ասոր մասին, ընդունինք, որ շատ դժուար է տեսնել մէկը, որ իր ըրած սխալին համեմատ չի հատուցանուիր: Նման իրողութիւններու կը հանդիպինք մեր կեանքի առաջին շրջանէն սկսեալ: Հարցուցէք պատանի զաւակներ ունեցող ծնողներու: Անոնք յաճախ կը հանդիպին նման պարագաներու: Զաւակներ կ'ատեն, երբ տեսնեն իրենց քոյրը կամ եղբայրը իրաւունք կ'ունենայ բան մը ընելու, իսկ իրենք, կը պատժուին նոյն բանը ըրած ըլլալուն համար: Ասոր համար է, որ անոնք յաճախ կը վիճին իրենց ծնողներուն հետ:

Որպէս հաւատացեալներ, յաճախ արդարութիւն մեզի համար կը նշանակէ, թէ մեղաւորները արժանի են Աստուծոյ բարկութեան եւ պատիժին, իսկ բարի մարդիկ՝ Անոր գնահատանքին: Սակայն, եթէ պահ մը խորհինք Աստուծոյ իրաւ արդար ըլլալուն մասին, մենք բոլորս ալ արժանի ենք իր դատապարտութեան: Ուրեմն, պէտք է ամէն օր Աստուծոյ փառք տանք, որ Ան մեր մեղքերուն համեմատ չի վարուիր մեզի հետ (Սաղմ. 103. 10):

Մենք պէտք է ուրախ ըլլանք, եւ ոչ թէ նեղուինք, որ մեր Հօր Աստուծոյ կարեկցութիւնը իր արդարութենէն աւելի նախապատիւ կը սեպուի: Ան իր սէրն ու շնորհքը կը շարունակէ ցուցաբերել բոլոր անոնց ալ, որոնք արժանի չեն եւ անյոյս կորսուած վիճակի մէջ կը գտնուին: Երբ այս մասին կը մտածենք՝ մտածենք, թէ վերջին անգամ մեզ վիրաւորող անձին կարեկցութիւն ցուցաբերեցինք, թէ արդարութիւն չեշտեցինք:

**Չենք կրնար կարեկցութիւն ցոյց տալ ուրիշներու, որովհետեւ Աստուած կարեկցած է մեզի:**

## Հաւատարիմ Աղօթք

Կարդա՛  
Ա. Տիմոթ. 2. 1-7

(Աղօթէ՛) մանաւանդ...  
թագաւորներու եւ  
իշխաններու համար:  
—Ա. Տիմոթ. 2. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱՒԿ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԶ  
■ Բ. Մնացորդաց 34-36  
■ Յովհաննու 19. 1-22

ները, սակայն ան աղօթած էր բոլորին համար ալ: Ան Հետեւած էր այն պատուէրին որ կը կարդանք Ա. Տիմոթ. Բ. գլուխին մէջ, ուր կ'ըսուի աղօթել «մանաւանդ թագաւորներուն եւ իշխաններուն համար» (Կ. 2): Հատուածը կը շարունակէ խօսիլ ըսելով.— «Որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք վարենք, կատարեալ Աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութիւնով», բան մը որ բարի ու «ընդունելի է Աստուծոյ առջեւ... որ կ'ուզէ որ բոլոր մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնան» (Կ. 2-4):

Որովհետեւ Աստուած «կը լսէ արդարներուն աղօթքը» (Առակ. 15. 29), ո՞վ գիտէ, Աստուած ինչպէս գործածեց Հիմմային հաւատարիմ աղօթքները: Առակ. 21. 1-ի մէջ կը կարդանք.— «Թագաւորին սիրտը ջուրի վտակներու պէս է Տէրոջ ձեռքին մէջ, գայն որ կողմը որ ուզէ, կը դարձնէ»:

Հիմմային պէս, մենք ալ պէտք է աղօթենք մեր առաջնորդներուն համար: Կա՞յ նման անձ մը քու շրջանակիդ մէջ, որուն համար Աստուած կը կանչէ քեզի, որ աղօթես:

---

**Մեր առաջնորդները Աստուծոյ մօտեցնելու  
համար, ուղղեմք մեր աղօթքները Աստուծոյ:**

**Է** մմա կրէյ մահացաւ Յունիս 2009-ին երբ ան 95 տարեկան էր: 24 տարիներ ան մեծ տան մը մէջ աշխատած էր որպէս տուն մաքրող սպասուհի: Ամէն գիշեր իր գործերը աւարտելէ ետք, ան կ'աղօթէր տանտիրոջ համար, խնդրելով որ Աստուած անոր շնորհք, իմաստութիւն եւ սպաւորութիւն տար:

Թէեւ Հիմմա 24 տարիներ նոյն տան մէջ ապրեցաւ, սակայն անոր բնակիչները չորս տարին անգամ մը կը փոխուէին: Տարիներու ընթացքին ան իր գիշերային աղօթքներուն մէջ յիշած էր վեց Միացեալ Նահանգներու անուններ: Թէեւ Հիմմա ունէր իր նախասիրած նախադաս-

## Կեցի՛ր եւ Օգնէ՛

Կարդա՛  
Ղուկաս 10. 30-37

Սիրե... ընկերո՞ք թու  
անձիո՞ պէս:  
—Ղուկաս 10. 27

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եպրաս 1-2
- Յովհաննու 19. 23-42

ձգել ու երթալ: Ես կը մերժեմ նման կեանք մը ապրել:»  
Յիսուս առակ մը պատմեց մարդու մը մասին, որ կեցաւ ճամբան, օգնելու ինկած մարդու մը (Ղուկ. 10. 30-37): Աւագակներ յարձակած էին Հրեայ մարդու մը վրայ, կողոպտած գայն եւ կիսամերկ ու վիրաւոր ձգելով փախչած էին: Հրեայ քահանայ մը եւ տաճարին մէջ աշխատող մարդ մը կը տեսնեն ճամբուն վրայ ինկած վիրաւորը եւ ճամբանին ծուելով միւս կողմէն կ'անցնին ու կ'երթան: Յետոյ Հրեաներէն անարգուած Սամարացի մարդ մը երբ կ'անցնի անկէ, կը տեսնէ վիրաւոր մարդը եւ գուժը կը շարժի անոր հանդէպ: Կը մօտենայ եւ իր կարելի միջոցներով վերքը կը մաքրէ ու կը կապէ եւ իր գրաստին վրայ դնելով գայն կը տանի պանդոկ մը: Ան կը վճարէ պէտք եղած ծախսերը ու կը խոստանայ հոգալու յաւելեալ ծախսերը իր վերադարձին:

Անկասկած մեր շուրջն ալ կան տառապեալ մարդիկ: Կարեկցինք անոնց ցաւին եւ կանգ առնենք օգնելու անոնց:

**Կարեկցութիւնը միշտ կը գործէ:**

**Տ** օքթ. Աքաթ Քուրցմըն, վիրաբոյժ մը, օր մը դասախօսութիւն մը տալու համար ինքնաշարժով տեղ մը կ'երթար: Ճամբան մեծ արկածի մը ականատես կ'ըլլայ: 20-է աւելի ինքնաշարժներ իրարու զարնուած, ամէն կողմ վիրաւորներ կային: Բժիշկը մէկդի կը կեցնէ ինքնաշարժը եւ կոչ կ'ուղղէ.— «Ես բժիշկ եմ, ո՞վ օգնութեան պէտք ունի»: Մէկ ու կէս ժամ աշխատելէ եւ կարգ մը ծանր վիրաւորներ հիւանդանոց դրկելէ ետք, կը վերադառնայ իր ինքնաշարժը: Ակնարկելով եղածին, Տօքթ Քուրցմըն կ'ըսէ.— «Իմ պատուաստութիւնը ունեցող մարդ մը, չի կրնար վիրաւորներ տեսնել եւ

## Միայն Մեղաւոր- ներուն Համար

Կարդա՛  
Եփեսացիս 2. 1-10

Վասնզի շնորհքով  
փրկուած էք դուք հա-  
ւատքի միջոցով, եւ այս՝  
ոչ թէ ձեզմէ է, հապա  
Աստուծոյ պարգեւն է,  
ոչ թէ գործերէն, որ  
մէկը չպարծենայ:  
—Եփեսացիս 2. 8-9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Եկրաս 3-5
- Յովհաննու 20

տանք Քրիստոսի եւ Ջայն կ'ընդունինք որպէս մեր Տէրն  
ու Փրկիչը, այն ատեն իր շնորհքով կը փրկուինք:

Մէկը կը ճանչնամ, որ ապրեցաւ տառապալի կեանք  
մը եւ մեռաւ առանց հասկնալու Աստուծոյ շնորհքին  
պատգամը: Իր հովիւը խօսեցաւ անոր եւ քաջալերեց զինք  
որ եկեղեցի յաճախէ: Բայց անոր պատասխանը եղաւ.—  
«Ես բոլորովին անարժան մէկն եմ»: Ան չգիտցաւ, թէ  
Աստուծոյ շնորհքը ամենէն աւելի այդպէս՝ իրեն պէս  
բոլորովին անարժան եղողներուն համար էր:

Եփեսացիներուն գրած իր նամակին մէջ Առաքեալը  
յստակօրէն կը բացատրէ, թէ հաւատացեալ ըլլալէ առաջ  
որքան անարժան էին անոնք, մեռած ըլլալով իրենց  
մեղքերուն մէջ (Եփես. 2. 1): Ապա, Առաքեալը կը գործածէ  
երկու յուսադրիչ բառեր.— «Բայց Աստուած» (Հ. 4) եւ կը  
չեչտէ Աստուծոյ կարեկցութիւնն ու շնորհքը, որով կարելի  
է թողութիւն գտնել եւ նոր կեանք ունենալ Քրիստոսով:  
Ահա՛ այս է, որ Աստուծոյ շնորհքը հիանալի կը դարձնէ:

**Յաւիտեանական կեանքի առաջին քայլն է ընդունիլ  
թէ մենք արժանի չենք անոր:**

**Թ**երեւս կան ոչ հաւատացեալներ  
ալ, որոնք կը սիրեն Հիանալի  
Շնորհք երգը, առանց գիտնալու,  
այդ Շնորհքին նշանակութիւնը: Օր  
մը, մեծ աւետարանիչ Մուտի, երբ  
սերտողութիւն մը կ'ընէր Աստուծոյ  
շնորհքին մասին, փողոց կ'իջնէ եւ  
առաջին հանդիպած մարդուն կը  
հարցնէ.— «Դուն գիտե՞ս ինչ ըսել  
է Շնորհք»: Մարդը ապշած կը  
պատասխանէ.— «Ո՞վ է Շնորհքը»:  
Մուտի կը սկսի մարդուն բացատրել,  
թէ Աստուած կարեկցելով մեղքի մէջ  
եղող հիւանդ մարդկութեան, ճրիա-  
բար ներում եւ նոր կեանք պարգե-  
ւեց անոնց՝ իր Որդւոյն Քրիստոսի  
խաչելութեամբ: Եւ երբ կը հաւա-

## Վազէ՛

Կարդա՛  
Ա. Կորնթ. 9. 19-27

2է՞ք գիտեր, թէ ասպարէզի՞ն մէջ վազողները բոլորը կը վազեն, բայց մէկը կը ստանայ մրցանակը: —Ա. Կորնթ. 9. 24

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Եպրա 6-8
- Յովհաննու 21

Մեր կեանքը լեցուն է պարտութիւններով եւ մենք որպէս հաւատացեալներ գերծ չենք յուսախաբութիւններէ, որոնք մեզի տեղի տալու կը հասցնեն: Սակայն, այս մրցումին մէջ, որ մեր հաւատացեալի կեանքն է, Պօղոս Առաքեալ կոչ կ'ընէ մեզի, որ շարունակենք մեր վազքը: Ան կ'ըսէ Կորնթացիներուն. — «Զէ՛ք գիտեր թէ ասպարէզին մէջ վազողները՝ բոլորն ալ կը վազեն, բայց մէկը կը ստանայ մրցանակը: Այնպէս վազեցէք, որ ստանաք» (Ա. Կորնթ. 9. 24): Մենք պէտք է հաւատարմաբար վազենք, խթանուած այն գիտակցութեամբ, թէ մեր վազելով մենք պատուած պիտի ըլլանք մեր թագաւորը եւ իրմէ է որ պիտի ստանանք յաւիտենական պսակը: Եթէ վարանինք մեր վազքին մէջ, դադրինք Աստուծոյ ծառայելէ կամ մեղքին տեղի տանք՝ մեր դիմադրուած դժուարութիւններուն պատճառով, վտանգած կ'ըլլանք այն վարձատրութիւնը, որ պիտի ստանայինք եթէ փորձէինք մեր լաւագոյնը: Սիպիլ շիտակ էր. — «Եթէ չվազես չես կրնար շահիլ»:

Որեւէ մտաւ շահելէ աւելի բարձր է լսելը մեր Տէրոջ խօսքը. — «Ապրի՛ս բարի ու հաւատարիմ ծառայ»:

**Ն**շանաւոր Կրակէ Կառքեր Ֆիլմին Նդերակատարներէն մէկը կը ներկայացնէ առասպելական Անգլիացի վազքի մարզիկ Հէրըլտ Աբրահամը: Շահելու եռանդով լեցուած, 100 մեթրի նախապատրաստական վազքին, որ պիտի տանէր զինք 1924-ի Ողոմպիական խաղերուն, ան կը պարտուի իր մրցակիցէն, խոր յուսահատութեան մատնուելով: Երբ իր բարեկամուհին կը փորձէ քաջալերել զինք, Աբրահամ բարկացած կը պոռայ. — «Ես կը վազեմ շահելու համար: Եթէ պիտի չկրնամ շահիլ, չեմ վազեր»: Բարեկամուհին՝ Սիպիլ Հանդարտօրէն կը պատասխանէ. — «Եթէ չվազես, չես կրնար շահիլ»:

## Բարի Պատմութիւնը

Կարդա՛  
Ղուկաս 23. 44 - 24. 3

Գտանք քարը՝ գերեզման-  
նէն մէկդի գլորուած, ու  
ներս մտնելով հոն  
չգտանք Տէր Յիսուսի  
մարմինը:  
—Ղուկաս 24. 2-3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եկրաս 9-10
- Գործք 1

**Մ**արդիկ յաճախ ժխտական երե-  
ւոյթները յիշելու աւելի հա-  
կամէտ են քան դրական բաները,  
ըստ ուսումնասիրութեան մը, որ  
կատարուած է Շիքակոյի համալսա-  
րանին մէջ: Միւս կողմէ, երբ մարդոց  
հարցնելու ըլլանք, անոնք կ'ըսեն  
մեզի, թէ իրենք կ'ուզեն հեռու  
մնալ հաղորդակցական միջոցներու  
գէշ լուրերը լսելէ, ինչպէս աղէտ-  
ներու, հիւանդութիւններու եւ  
տնտեսական տագնապներու նման  
տխուր հարցեր: Սակայն, նոյն այդ  
ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ,  
թէ անոնց միտքերը շատ խորը  
թափանցած են այդ տխուր  
նկատուած լուրերուն մէջ:

Քէթրին Հէնքի (1834-1911) շատ աւելի հետաքրքրուած  
էր «Բարի Լուրերով»: Անոր մեծ փափաքն էր տեսնել  
երիտասարդ կիներ, որոնք Յիսուսը ճանչնալով, Զայն  
իրենց Տէրն ու Փրկիչը կ'ընդունէին: 1866-ին ան ծան-  
րօրէն հիւանդացաւ: Իր անկողնէն, ան սկսաւ մտածել  
բոլոր անոնց մասին՝ որոնց պատմած էր Յիսուսի փրկութեան  
պատմութիւնը եւ փափաքեցաւ, որ անոնցմէ մէկը գար  
եւ գինք այցելէր ու մխիթարէր այդ «հին, հին  
պատմութեամբ»: Այդ առիթով էր, որ ան բանաստեղծու-  
թիւն մը գրեց որ վերջը հոգեւոր երգի մը վերածուեցաւ.—  
ՏՈՒՐ ԻՆՁ ԱՅՆ ՀԻՆ, ՀԻՆ ԼՈՒՐԸ

Զայն մեղմ կերպով պատմէ ինձ, որ ես լաւ հասկնամ  
Զարմանալի փրկանքը, իբրեւ մեղաց դարման:

Եւ շատ անգամ կրկնէ ինձ, զի կը մոռնամ դիւրաւ  
ԱՌԱՍՈՒՄՈՒՍ կանուխ ցօղ, միջօրէիս կորեաւ:

Պատմէ մէկու մը Յիսուսի այդ հին պատմութիւնը եւ  
Անոր սիրոյն մասին: Անոնք պէտք ունին բարի լուրի մը:

**Քրիստոսի բարի լուրը լաւագոյն լուրն է աշխարհ:**

## Գեղեցիկ Եղանակ Մը

Կարդա՛  
Ա. Պետ. 2. 9-12

Որպէսզի հոչակէք  
Անոր առաքինութիւն-  
ները, որ կանչեց ձեզ  
խաւրդէն Իր սքանչելի  
լոյսին:

—Ա. Պետրոս 2. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՅՈՂ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Նէմեայ 1-3
- Գործք 2. 1-21

Մենք բոլորս ալ կրնանք անհաւանական աղբիւրներ նկատուիլ երբ Յիսուսի գեղեցկութիւնը կը սկսի մեզմէ դուրս հոսիլ: Յիսուս ինք այդպէս ծրագրած է ամէն բան: Պարզ մարդիկ, ինծի եւ քեզի պէս, երբ Յիսուսը ներկայացնելու համար մեր կեանքի բեմին վրայ յայտնուինք, թերահաւատ աշխարհի առջեւ, մեր բարեկամները, ընտանիքի անդամներն ու մեզ շրջապատող մարդիկ, պիտի զարմանան եւ հիանան, երբ տեսնեն, թէ ինչպէս Քրիստոսի սէրն ու շնորհքը մեր կեանքէն դուրս կը ծորի:

Ես կը սիրեմ Պետրոսի յիշեցումը երբ կ'ըսէ:— «Բայց դուք ընտիր ցեղ մըն էք... սեփական ժողովուրդ մը, որպէսզի հռչակէք Անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց» (Ա. Պետ. 2. 9): Թերեւս դուն կը խորհիս, թէ դուն անհաւանական աղբիւր մըն ես, սակայն, երբ հաւատաս եւ թոյլ տաս, որ Քրիստոս բնակի քու մէջդ եւ հոսի քեզմէ դուրս, քեզ դիտող մարդիկ, ոտքի պիտի ելլեն եւ պիտի ծափողջոյնէն քեզ:

**Քրիստոսի գեղեցկութիւնը կրնայ շատ յաճախ յայտնուիլ անհաւանական թուող աղբիւրներէ:**

**Ս** իւզան Պոյլ, 2009-ին ստացաւ Անգլիոյ բարձրագոյն մրցանակը երգի մէջ: Բաղդատելով միւս մրացակիցներուն, ան շատ պարզ երեւոյթ մը ունէր: Ոչ ոք չատ բան կ'ակնալէր իրմէ երբ ան մօտեցաւ բարձրախօսին եւ սկսաւ երգել: Դատակազմի անդամները հմայուած անոր գեղեցիկ, հնչեղ եւ մաքուր ձայնէն, որ կը լեցնէր սրահը, ոտքի ելան հանդիսականներուն հետ, ուրախութեամբ եւ ծափողջոյններով գնահատեցին զինք: Բոլորն ալ զարմացած էին, թէ ինչպէս այդքան գեղեցիկ ձայնով երգուած երգ մը դուրս եկաւ, այդպէս անհաւանական թուող աղբիւրէ մը:

## Ծիւղը

Կարդա՛  
Մատթէոս 7. 1-6

Ինչո՞ւ կը տեսնես  
եղբօրդ աչքին մէջի  
շիւղը, ու չես նշմարեր  
քու աչքիդ մէջի  
գերանը:  
—Ղուկաս 6. 41

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Նէեմեայ 4-6

■ Գործք 2. 22-47

տեսակի օժանելիքներ փորձելէ եւ մի քանի աւելի ժամեր սպասելէ ետք, ի վերջոյ ազատեցայ այդ փոքր շիւղէն:

Այդ փոքր, զիս անհանգստացնող շիւղը, պատճառ դարձաւ, որ նոր մտածում մը ունենամ՝ Մատթէոս 7-րդ գլխուն մէջ, Յիսուսի ուրիշները քննադատելու ուսուցմունքին մասին: Առաջին մտածումս այն եղաւ, թէ որքան գործնական, պատկերաւոր եւ տպաւորիչ է Յիսուսի ներկայացուցածը: Յիսուս գործածած է այնտեղ գրական՝ թերեւս չափազանցուած նկատուած պատկեր մը: Ան կը բացատրէ, թէ որքան մեծ յիմարուծիւն է քննադատել ուրիշ մը տկարութեան մը կամ սխալի մը համար, երբ ինքն ալ նոյնչափ այդ տկարութիւնը կամ սխալը ունի: Եթէ մէկու մը աչքին մէջ եղող շիւղը կրնանք տեսնել, սակայն մեր աչքին մէջի գերանը կ'ուրանանք, կը նշանակէ, թէ շատ մեծ սխալ մը կայ մեր կեցուածքին մէջ:

Ինքնարդարացումի կեցուածքը տեղ չունի հաւատացեալի կեանքին մէջ: Նախ պէտք է մեր թերութիւնները տեսնել:

**ԳՅՅԷ ԲՈՒ ԿԵԱՆՔԻ, ՈՐԻՉՆԵՐՈՒՄ ԱՅՔԻՆ ՇԻՂԸ  
ՏԵՍՆԵԼԷ ԱՌԱՅ:**

## Ինչո՞ւ Տառապիլ

Կարդա՛  
Մատթեոս 5. 1-12

Երանի հոգիով  
աղքատներուն:  
—Մատթեոս 5. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Նէեմեայ 7-9
- Գործք 3

անմիջական կարիք մը ըլլալուն:

2. Տառապանքը կ'օգնէ, որ Աստուծոյ կախեալ ըլլալու փորձառութիւնը ունենանք եւ զգանք իրարու կարիքը:

3. Տառապանքը կ'օգնէ, որ կարենանք զանազանել տարբերութիւնը մեր կարիքներուն եւ շուայլութեանց:

4. Տառապանքը կ'օգնէ, պատասխանելու Աւետարանին կոչին, որովհետեւ մենք այնքան շատ յուսահատած կ'ըլլանք եւ կը ստիպուինք աղերսել Աստուծոյ:

Աղքատը, անօթին, սգաւորները եւ բոլոր անոնք, որոնք կը տառապին, երանի են (Մատթ. 5. 3-6), որովհետեւ անոնց կարիքաւոր ըլլալը միշտ զգալի է իրենց: Հարուստ, յաջող եւ գեղեցիկ մարդիկը կ'ապրին իրենց կեանքը, միշտ վստահելով իրենց ունեցածին: Սակայն անոնք որոնք աղքատ եւ դժգոհ են իրենց կեանքէն, աւելի հաւանականութիւնը ունին ընդունելու Աստուծոյ ձրի շնորհքը եղող՝ սէրը: «Երանի հոգիով աղքատներուն», որովհետեւ «Երկիրքի Թագաւորութիւնը անոնցն է» (Մատթ. 5. 3):

Որքան տկար զգանք, այնքան աւելի պիտի ուզենք  
կառչիլ Աստուծոյ:

**Յ** խուսի ուսուցումները ցոյց կու տան, թէ Աստուած կողմնակից է աւելի ճնշուածներուն: Այս ուսուցումը շեշտուած է լերան քարոզին մէջ եւ տարբեր առիթներով: Օրինակ.— «Առաջինները պիտի ըլլան յետին եւ յետինները առաջին» (Մատթ. 19. 30, Մարկ. 10. 31, Ղուկ. 13. 30), «Վասնզի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ» (Ղուկ. 14. 11, 18. 14): Բայց ինչո՞ւ Աստուած մեր յատուկ ուշադրութեան կ'ուզէ յանձնել ընկճուածները: 1. Տառապանքը կ'օգնէ, որպէսզի անդրադառնանք մեր փրկութեան

## Ո՞րն է Ապահովը

Կարդա՛  
Ա. Տիմ. 6. 6-10, 17-19

Պատուիրե՛ այս աշխարհի մէջ հարուստ եղողներուն, որ չհպարտանան եւ անստոյգ հարստութեան վրայ յոյսերն ինչ չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ: —Ա. Տիմ. 6. 17

ԱՍՏՈՒԾԱԵՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Նէեմեայ 10-11
- Գործք 4. 1-22

յիշեցնէ, թէ միայն մէկ ճշմարիտ եւ վստահելի ապահովութեան միջոց կայ այս յարափոփոխ աշխարհի մէջ: Կարելի է նոր նկատարութեամբ մը ընկալել Առաքեալին խօսքը.— «Պատուիրե՛ այս աշխարհի մէջ հարուստ եղողներուն, որ չհպարտանան եւ իրենց անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ, որ ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու, բարիք թող գործեն, բարի գործերով թող հարստանան, առատաձեռն եւ ուրիշին կարիքներուն հաղորդակից ըլլան, ապագային համար իրենք իրենց լաւ հիմ դնելով իբր պահեստ՝ որպէսզի բռնեն յաւիտենական կեանքը» (Ա. Տիմ. 6. 17-19):

Երբ մեր միջոցները պակսին, մենք կրնանք հարստանալ մեր բարի գործերով, առատաձեռնութեամբ, բաժնեկցելով ուրիշներուն հետ մեր ունեցածը: Եթէ նիւթական կայունութիւնը վերահաստատուի, աւելի քիչ կառչինք մեր ունեցածին եւ միմիայն վստահինք Աստուծոյ:

---

Անորոշ ժամանակներու մէջ մեր ապահովութիւնը  
միայն Աստուծով կրնայ ըլլալ:

Վերջին տարիներու համատարած տնտեսական տագնապին, այրի կին մը կորսնցուց իր եկամուտին մէկ երրորդը, երբ դրամատունը չկրցաւ վճարել իրեն իր դրամատոմսերու շահաբաժինը: Սակարանի թերթը այդ կնոջ արցունքախառն խօսքերը չակերտելով կ'ըսէր.— «Կը խորհիս, թէ նման բան մը չկրնար պատահիլ: Ա՛լ բան մը ապահով չէ»:

Աղէտներ եւ դժուարին պայմաններ յաճախ կը ցնցեն մեր մտածումները: Մեր լաւագոյն կարծած ծրագրիներն ու յոյսերը կը խորտակուին յաճախ պատահարներով, որոնք մեր հակակշիռէն դուրս կը մնան: Աստուծոյ Խօսքը մեզի կը

## Կեանքի Կարճութիւնը

Կարդա՛  
Սաղմոս 90

Մեր կեանքի տարիները եօթանասուն են... տակաւին անոնց հպարտանքը տաժանք եւ ունայնութիւն է, որովհետեւ անոնք շուտով կ'անցնին, ու մենք կը թռչինք:

—Սաղմոս 90. 10  
ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՉԻ ՄԷՉ  
ՏՄՈՒՆ ՄԷՉ

- Նէեմեայ 12-13
- Գործք 4. 23-37

**Հ**ոկա. 19, 2008-ին, լսեցի երգչախումբի մը գլխաւոր երգիչին՝ Լէվի Սթապսի մահուան լուրը՝ 72 տարեկանին: Երիտասարդութեանս ես շատ կը սիրէի «Չորս Բարձրագոյններ» քառեակին երգերը, մանաւանդ Լէվիի ապրուած եւ կըքոտ ձայնը: Երբեք չէի հանդիպած իրեն անձնապէս, եւ ոչ ալ երգահանդէսի մը ընթացքին, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ, անոր մահը շատ ազդեց վրաս:

Թերեւս տխրութեանս ետին կարայն գիտակցութիւնը, թէ ես ալ կը ծերանայի: Փոքր եղած ատենս, երբ լսէի մէկու մը մահը, ինծի կը թուէր, թէ ժամանակը չէր քալեր դէպի առաջ, այլ վերջ կը գտնէր:

90-րդ սաղմոսը, որ կը վերագրուի Մովսէսին, կ'ըսէ:— «Մեր կեանքի տարիները եօթանասուն են, եթէ զօրութիւնով ութսուն ալ ըլլան, տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է, վասնզի անոնք շուտով կ'անցնին ու մենք կը թռչինք (Սաղմ. 90. 10): Այս բառերը մեր ականջներուն հաճելի չեն հնչեր: Կ'ուզենք միշտ երիտասարդ մնալ, սակայն Աստուծոյ Խօսքը մեզի կը յիշեցնէ, թէ տարիները պիտի անցնին եւ օր մը մահը պիտի գայ:

Այս ճշմարտութիւնը մեզի կը ստիպէ մենամարտելու երկու հիմնական հարցումներու հետ.— Արդեօք պատրաստ եմ «թռչելու», կեանքիս աւարտին, վստահելով Քրիստոսի, որպէս իմ Փրկիչս: Արդեօք կը գործածեմ իմ սլացող օրերս, հաճեցնելու զիս յաւիտենապէս սիրող Աստուծոյ:

Սիրելի ընթերցող բարեկամ, ի՞նչ է քու դիրքդ անցնող տարիներուդ հանդէպ: Հիմա ինչ տարիքի մէջ գտնուելու ըլլաս, կեանքիդ կարճ ըլլալը ի՞նչ մարտահրաւէր ունի քեզի այսօր:

**Մեմք չեմք կրնար հակաշոնել մեր կեանքի երկարութիւնը, բայց կրնանք իմաստաւորել անոր խորութիւնը:**

## Շնորհակալութիւն Հայրիկ

Կարդա՛  
Ա. Թեսաղ. 2. 1-12

Ինչպէս գիտէք, ձեզմէ  
ամէն մէկը ինչպէս հայր  
մը իր որդիները,  
այնպէս կը յորդորէիք  
ու կը մխիթարէիք եւ  
կը վկայէիք:  
—Ա. Թեսաղ. 2. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Եսթեր 1-2  
■ Գործք 5. 1-21

գիտէք ինչպէս ձեզմէ ամէն մէկը՝ յորդորեցինք եւ  
մխիթարեցինք, ինչպէս Հայր մը իր զաւակները»:

«Յորդորել» - Մօտ զգալ, խրատել: Հայրեր երբեմն կը  
խորհին, թէ ամենէն կարեւորը դրամ բերելն է տուն:  
Սակայն, զաւակներ աւելի պէտք ունին իրենց հօր  
քաջալերութեան:

«Մխիթարել» - Զաւակի մը համար ամենէն կարեւորը  
հօր մը իր քով նստիլ, մտիկ ընել ու իր հետ խօսիլն է:  
Առանց նման յարատեւ կապակցութեան, յարաբե-  
րութիւններ կրնան հետզհետէ պաղիլ:

«Վկայել» - Ճշմարտութիւնը հաստատել: Հայրեր պէտք  
է իրենց զաւակները արթնցնեն Աստուծոյ Խօսքին ճշմար-  
տութեան հանդէպ, իրենց ապրած կեանքի օրինակով: Նոյ-  
նիսկ ձախողութեան ատեն, պէտք է հաստատեն շիտակը,  
ներողութիւն խնդրելով: Երախտապարտ ըլլանք այն Հայ-  
րերուն, որոնք կ'օգնեն իրենց զաւակներուն, որպէսզի  
անոնց «ընթացքը արժանավայել ըլլայ Աստուծոյ» (Կ. 12):

**Լաւ Հայրեր կ'արտացոլացնեն Երկնաւոր Հայրը:**

**Մ**իացեալ Նահանգներու մէջ,  
Պէշպի հեռաւոր վայրեր հեռա-  
ձայններ կ'ըլլան ամենէն շատ կը  
Մայրերու Օրը: Իսկ Հայրերու Օրը,  
ամենէն շատ հեռաձայն ստացողին  
կողմէ վճարուելիք հեռաձայնները  
կը կատարուին: Ասիկա ցոյց կու  
տայ, թէ զաւակներ տակաւին իրենց  
հօրմէ կախեալ կը զգան, նոյնիսկ  
երբ տունէն հեռու են:

Հայրեր պէտք են շատ աւելի  
քան նիւթական օգնութիւնը: Ա.  
Թեսաղ. 2. 10-12 համարները, թէեւ  
կ'ակնարկեն եկեղեցական առաջնորդ-  
ներուն, սակայն Պօղոս Առաքեալ  
կը բացատրէ, թէ անոնց պաշտօնը  
շատ նման է հօր մը դերին:— «Դուք

## Երեւակայական Սպառնալիք Մը

Կարդա՛  
Ծննդոց 33. 1-4

Եսաւ զանհկա  
դիմաւորեց վազեց եւ  
գրկեց գայն:  
—ԾՆՆԴՈՑ 33. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԻ ՄԷՉ

ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Եսթեր 3-5

■ Գործք 5. 22-42

մը կը կարծէր: Անոր սպառնալիքը պատրանք մըն էր:

Հին Կտակարանին մէջ Յակոբ երեւակայեց սպառնալիք մը իր դէմ, որ իսկութեան մէջ գոյուլթիւն չունէր: Տարիներ առաջ, Յակոբ գողցած էր իր եղբօր՝ Եսաւի օրհնութիւնները իրենց հօրմէ: Հիմա, տարիներ իրարմէ բաժնուած մնալէ ետք, անոնք նորէն պիտի հանդիպէին: Յակոբ կը խորհէր, թէ եղբայրը խաղով մը իր վրէժը պիտի լուծէր: Ուրեմն ան նուէրներ զրկեց Եսաւի՝ տեսակ մը հաշտութեան եւ խաղաղութեան հատուցում: Ապա, երբ Յակոբ տեսաւ Եսաւին 400 մարդերով իրեն գալը, աւելի սարսափեցաւ, խորհելով որ իր վրայ յարձակումի կու գան: Բայց ի յայտ եկաւ, որ անոնք կու գային զինք ողջունելու:

Մեր փոխյարաբերութեան մէջ, երբեմն սխալ կը հասկնանք կացութիւն մը: Աղօթքով խնդրենք Աստուծմէ, որ մեզի իմաստութիւն տայ զատորոշելու իրաւն ու երեւակայականը, որպէսզի չկորսնցնենք բարեկամութիւն մը անհիմն սպառնալիքի մը պատճառով:

**Մի՛ վախճար ենթադրուած թշնամիէ մը, քայց  
վստահիր Աստուծոյ նոր բարեկամ մը շինելու:**

## Ոչ Մէկը Յիշեց

Կարդա՛  
Ժողովողի 9. 13-18

Անիկա իր իմաստութիւնովը քաղաքը ազատեց, բայց այդ աղքատ մարդը յիշող մը չեղաւ:  
— Ժողովողի 9. 15

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԵՒ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ

■ Եպօթեր 6-8

■ Գործք 6

Մարդիկ երբեմն կարգ մը պատճառներով կարծես կ'ուրանան կամ շուտով կը մոռնան այն բարի գործերը, որ խոնարհ եւ աղքատ մարդու մը կողմէ կը կատարուի իր իմաստութեան եւ նուիրումին շնորհիւ: Ամէն պարագայի, «(Տակաւին) իմաստութիւնը աւելի լաւ է քան զօրութիւնը», նոյնիսկ, եթէ «աղքատ մարդուն իմաստութիւնը անարգուի» (Հ. 16): Լաւ է ըլլալ հանդարտ եւ համեստ մարդ մը, որ թէեւ կը մոռցուի, եւ սակայն բարի գործեր կը թողու իր ետին, քան յոխորտացող, անհաճոյ եւ յիմար մարդ մը, որ թէեւ ծափերու կ'արժանանայ, սակայն շատ բարիքներու կորուստին պատճառ կ'ըլլայ» (Հ. 18):

Հետեւաբար, ի վերջոյ հարցը մեր ճանաչում եւ երախտագիտութիւն ստանալը չէ, այլ այն հոգիներն են, ուր մենք ցանցիցիք բարութեան եւ արդարութեան սերմերը: Ինչպէս ըսուած է.— «Իմաստութիւնը արդարացաւ իր բոլոր զաւակներով» (Ղուկ. 7. 35): Արդեօք զո՞վ տպաւորած ենք աստուածային իմաստութեամբ խօսելով եւ գործելով:

Իմաստուն մարդը կը դասաւորէ իր երկրային նպատակները երկնային շահեր ապահովելու համար:

**Ժողովողի 9. 15** Համարը մեկնաբանելով, Մարթին Լուտեր կը մէջբերէ պատմութիւնը Յոյն զինուորական եւ քաղաքական բարձրաստիճան թէմիսթոլքսի, որ Յունական բանակի հրամանատարն էր: Իր ռազմավարութեան շնորհիւ, ան չահեցաւ Սալամիսի պատերազմը եւ դուրս դրաւ Պարսկական բանակը Յունական հողերէն՝ փրկելով քաղաքը: Մի քանի տարի ետք, ան մոռցուեցաւ իր հայրենակիցներուն կողմէ եւ Աթէնքէն դուրս աքսորուեցաւ: Լուտեր կ'եզրակացնէ.— «Թէմիսթոլքս շատ մեծ բարիքներ ըրաւ իր երկրին եւ սակայն, անոր փոխարէն մեծ ապերախտութիւն ստացաւ»:

## Մորենիներ եւ Վայրի Ծաղիկներ

Կարդա՛  
Գործք 14. 1-22

Շատ Գեղութիւն կրելով  
կրճատ Աստուծոյ  
թագաւորութիւնը մտնել:  
— Գործք 14. 21

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Եպօթեր 9-10
- Գործք 7. 1-21

ծաղիկներուն, պահ մը մոռցայ այդ անպատեհութիւնները:

Այս մեղաւոր աշխարհի մէջ մեր կեանքն ալ լեցուն է այդպէս ըստած «նեղութիւններէ անցնելու» փորձութիւններով: Այդ փորձութիւններէն մէկը հալածուիլն է: Աշակերտները անոր փորձառութիւնը ունեցած էին յաճախ: Անոնք գիտէին այն լաւ բաները, որոնք Յիսուս կ'ուստեցանէր եւ կը շնորհէր բոլոր անոնց, որոնք իրեն կը հետեւէին: Բայց աշակերտները խիստ հակառակութիւններու կը հանդիպէին, երբ կը փորձէին Յիսուսի մասին խօսիլ ուրիշներու (Գործք 14. 5):

Մեզմէ բոլոր անոնք, որոնք ընտրած են Աստուծոյ ճամբան եւ իրենց փորձառութեամբ գիտեն, թէ ան «գերազանց ճամբայ մըն է» (Ա. Կոր. 12. 31), պիտի տոկան եւ յարատեւեն, հակառակ դժուարութեանց եւ վտանգներու: Այդպէս ընելով, հաւատացեալներ ցոյց տուած կ'ըլլան ուրիշներու Աստուծոյ գեղեցիկ պատկերացումը խաղաղութեան, կարեկցութեան եւ ներողամտութեան:

**Աշխարհը՝ փորձութիւններու երկիր: Երկինքը՝  
ուրախութեան երկիր:**

**Մ**եր տան ետեւի եղածաղիկները այս տարի արտասովոր գեղեցկութիւն մը ունէին, Աստուծոյ շնորհով: Ուզեցի նկարել զանոնք թառամելէ առաջ, սակայն դժուար էր բաւականին չափ մօտենալ անոնց, քանի որ գետինը ցեխոտ էր եւ լճացած: Արեւոտ օր մը, կէսօրէ ետք, մոյկեր հագայ եւ փուշերուն մէջէն մօտեցայ այդ վայրի ծաղիկներուն: Նկարելէ առաջ, զգացի թէ ցեխոտ ջուրերը անցած են մոյկերէս ներս եւ հասած ոտքերուս, սրունքներս խոցոտուած մորենիներու փուշերէն եւ մլուկները խայթած մորթս: Սակայն աչքերս յարած գեղեցիկ եղած

## Որոմները Զսպել

Կարդա՛  
Մարկոս 4. 13-20

Աշխարհիս զբաղում-  
ներն ու հարստութեան  
խաբէութիւնները, եւ  
ցանկութիւններ մէջը  
մտնելով, խօսքը կը  
խեղդեն ու կ'ըլլան  
անպտուղ:  
—Մարկոս 4. 19

ԱՍՏՈՒԱԾԱԵՌՈՒՆԵՐ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Յոբ 1-2  
■ Գործք 7. 22-43

Իննամող մասնագէտի մը, որ իր մասնագիտութեամբ կրցաւ փճացնել այդ որոմները:

Ասիկա ինծի յիշեցուց Յիսուսի պատմած առակը (Մարկ. 4. 13-20): Յիսուս այնտեղ կը պատմէ, թէ ինչպէս մարդիկ մեծ խանդավառութեամբ կը լսեն եւ կ'ընդունին Աստուծոյ *Խօսքը*, սակայն շուտով աշխարհի մտահոգութիւնները, հարստութիւնն ու հաճոյքները, մանաւանդ վաղուան մտահոգութիւնը, որոմներու պէս կը բուսնին եւ կը խեղդեն բարի սերմերը եւ Աստուծոյ *Խօսքը* կը դառնայ անպտուղ:

Որոմները զսպելու եւ փճացնելու համար պէտք ունինք Աստուծոյ դիմելու, իրեն մտիկ ընելու եւ իր օգնութիւնը խնդրելու: Երբ մեր մտահոգութիւնները աղօթքով եւ հաւատքով Աստուծոյ ներկայացնենք, Ան կրնայ փրկել մեզ եւ իր ներկայութեամբ մեր կեանքը կ'ըլլայ դարձեալ երջանիկ եւ պտղաբեր:

Արմատախիլ ընելու համար մեր մտահոգութեանց որոմները, պէտք է ծուկկի գալ աղօթքի:

**Ե**րբ մեր նոր տունը գնեցինք, շատ գեղեցիկ եւ մաքուր խոտով ծածկուած բակ մը ունէր: Ամառուան եղանակին, ընտանեօք կ'ուրախանայինք այդ մաքուր, կանաչ եւ փափուկ խոտը տեսնելով:

Սակայն, յաջորդ գարնան, երբ խոտերը սկսան նորէն ծլիլ եւ կանաչնալ, կարգ մը օտար խոտեր երեւցան մեր բակի մարմանդին մէջ: Սկիզբը շատ կարեւորութիւն չտուինք այդ վայրի խոտերուն, բայց հետզհետէ անոնք սկսան շատնալ: Ստիպուած եղանք մէկ առ մէկ փրցնել զանոնք: Սակայն անոնք նորէն մէջտեղ եկան: Վերջապէս, յուսահատած դիմեցինք խոտեր

## Ծիսակ Մարդիկ

Կարդա՛  
Ա. Կորնթ. 12. 7-18

Բայց Աստուած  
անդամներ դրաւ մէկ  
մարմինի մէջ, ինչպէս  
ինք ուզեց:  
—Ա. Կորնթ. 12. 18

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՉ

■ Յոբ 3-4

■ Գործք 7. 44-60

**Հ**րաշք Ֆիլմը կը ներկայացնէ  
իրական պատմութիւնը, Միացեալ  
Նահանգներու մէջ տեղի ունեցող,  
սառի վրայ սահելու ողորմալիական  
խաղի մը: Բոլորովին անհա-  
լանական թուող խումբը կը հասնի  
ոսկիէ մետալին: Պատմութեան մէջ  
ցոյց կը տրուի, թէ ինչպէս խումբին  
մարզիչը կ'ընտրէ իր խաղացողները:  
Երբ ան իր օգնականին կու տայ  
ցանկը իր ընտրած մարզիկներուն,  
օգնականը զարմացած կ'ըսէ  
մարզիչին, թէ ինք դուրս ձգած էր  
չատ կարեւոր խաղացողներ: Մարզիչը  
կը պատասխանէ.— «Ես լաւ խաղ-  
ցողները չէ որ կ'ուզեմ՝ այլ շիտակ  
խաղացողները»:

Խումբին մարզիչը գիտէր, թէ մարզիկի մը անհատական  
կարողութիւնը կրնար խումբը միայն որոշ տեղ մը  
հասցնել՝ եւ ոչ աւելին: Ան աւելի կը փնտռէր անձուրաց  
եւ հաւաքական ոգի ունեցող խաղացողներ, որ աւելի կարեւոր  
էր իրեն համար, քան տաղանդ ունեցող մը: Անոր նա-  
խընտրութիւնը կ'երթար իմբային խաղի յաջողութեան  
եւ ոչ թէ անհատ խաղացողի փառքին:

Աստուածաչնչական կոչին մէջ ալ նման իրողութիւն  
մը շեշտուած կը տեսնենք: Աստուծոյ ծրագիրներուն մէջ  
իւրաքանչիւր հաւատացեալ իր գործի բաժինը կը կատարէ,  
բայց արդիւնքը հաւաքական աշխատանքի իրագործում  
է: Պողոս Առաքեալ բացատրելէ ետք հոգեւոր շնորհքներու  
մեծ տարբերութիւնը հաւատացեալներու միջեւ, կ'ըսէ.—  
«Հոգիին յայտնաբերումը իւրաքանչիւրին տրուած է՝ բո-  
լորին օգուտին համար» (Ա. Կոր. 12. 7): Երբ կը գործածենք  
Աստուծոյ մեզի տուած շնորհքը, իր նպատակը իրակա-  
նացուցած կ'ըլլանք եւ ինք կը ստանայ փառքը:

**Յիսուսի մարմինը եղող հաւատացեալներու  
խումբին մէջ անկարելու մարդ չկայ:**

## Յանցանքներով Լեցուն

Կարդա՛  
Ա. Տիմոթ. 1. 12-17

Մեր Տերոջ շնորհքը  
խիստ շատ եղաւ ինձի:  
—Ա. Տիմոթէոս 1. 14

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԶ

- Յոր 5-7
- Գործք 8. 1-25

նախատող» (Ա. Տիմ. 1. 13): Առաքեալը նոյնիսկ ինքզինք կը կոչէ «Մեղաւորներուն գլխաւորը» (Կ. 15):

Մենք ալ ատեն մը բաժնուած էինք մեր Տէրոջմէն՝ մեր մեղքերուն պատճառաւ, եւ կը նկատուէինք իր թշնամիները (Հռովմ. 5. 10, Կող. 1. 21): Սակայն երբ խոստովանեցանք մեր մեղքերը եւ զգացինք իր թողութեան կարիքը, Ան մաքրեց մեզ եւ նոր մարդ մը ըրաւ:

Մեզմէ բոլոր անոնք, որոնք Տէրը ճանչած են շատ մը տարիներէ ի վեր, թերեւս հակամէտ ըլլան մոռնալու, թէ ինչ բանէ ներում գտած եւ ազատուած են: Մեր անցեալը յիշել եւ ներկայ ձախողութիւնները մեր աչքին առջեւ ունենալ, եւ Աստուծոյ փառք տալ իր ներումին համար, կրնայ օգնել մեզի, որ չիյնանք «ուրիշներէն աւելի սուրբ» նկատելու այդ փորձութեան մէջ:

Բոլորս ալ յանցանքներով լեցուն ենք, բայց Աստուած արժանի է ամէն փառաբանութեան մեզի հանդէպ իր ունեցած կարեկցութեան համար:

**Օ**ր մը, մարդ մը գործի դիմում-  
նազիր մը լեցնելու ատեն կը  
հասնի հարցումի մը, որ կ'ըսէր.—  
«Երբեք ձեռքակալուած ես»: Մար-  
դը կը պատասխանէ «Ո՛չ»: Յաջորդ  
հարցումը որ կը վերաբերէր անոնց,  
որոնք «Այո» պատասխանած ըլլա-  
յին, կ'ըսէր.— «Ինչո՞ւ»: Մարդը կը  
խորհի թէ պէտք էր այդ հարցումին  
ալ պատասխանէր, կը գրէ.— «Երբեք  
չեմ բռնուած»: Ան յայտնապէս գի-  
տէր, թէ ինք շատ յանցանքներ  
գործած էր: Նոյնպէս, Պօղոս Առաք-  
եալ գիտէր, թէ անձնապէս շատ մեծ  
սխալներ գործած եւ մեղանչած էր  
Աստուծոյ դէմ: Ան կ'ըսէ.— «Նախա-  
պէս հայհոյիչ էի, հալածող եւ  
նախատող» (Ա. Տիմ. 1. 13): Առաքեալը նոյնիսկ ինքզինք  
կը կոչէ «Մեղաւորներուն գլխաւորը» (Կ. 15):

Շնորհքը ամէն բան է անոնց համար, որոնք  
արժանի չեն ոչ մէկ բանի:

## Իսկապէս Ծարաւած

Կարդա՛  
Սաղմոս 42

Ինչպէս եղջերուն ջուրի  
վտակներուն կը  
փափաքի, այնպէս ալ իմ  
անձս քեզի կը  
փափաքի, ո՛վ  
Աստուած:  
—Սաղմոս 42. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԼԵՂ  
ՏԱՐՈՒՆ ԼԵՂ

■ Յոբ 8-10

■ Գործք 8. 26-40

**Չուրի համար:** **Ջարիվեր մը բարձրանալէ ետք, ինքնաշարժը կեցուց դեսպանատան մը դրան առջեւ: Երբ ներս անցանք, տեսայ Չուր պաղեցնող խոշոր աման մը: Անմիջապէս գաւաթ մը յափշտակեցի եւ զայն մի քանի անգամներ լեցուցի եւ խմեցի ու խմեցի: Մարմինս շատ հեղուկ կորսնցուցած ըլլալով, շատ Չուրի պէտք ունէր ջրագուրկ չըլլալու համար: Սաղմոսներգուն կը բաղդատէ Ֆիզիքական ծարաւը հոգեկան ծարաւին հետ: Ան կ'ըսէ. — «Ինչպէս եղջերուն Չուրի վտակներուն կը փափաքի, ո՛վ Աստուած» (Սաղմ. 42. 1): Անոր ծարաւը սաստիկ կարօտ մըն էր Աստուծոյ - միակ ապրող Աստուծոյ (Հ. 2):**

**Արդեօք կա՞յ բան մը, որուն դուն իրապէս կը տենջաս, եւ այս աշխարհը չի կրնար հայթայթել քեզի: Այդ անգոհուածները հոգիի ծարաւ մըն է Աստուծոյ հանդէպ: Գնա՛ Անոր, որ միայն ինք կրնայ հագեցնել հոգեկան ծարաւը, «Որովհետեւ Անիկա ծարաւացած հոգին կը յագեցնէ ու անօթեցածը բարուծիւնով կը լեցնէ» (Սաղմ. 107. 9):**

---

**Միայն Յիսուս՝ որպէս կենաց ջուրը, կրնայ  
յագեցնել ծարաւած հոգին:**

## Թունաւոր Ապրելակերպ

Կարդա՛  
Ա. Թագ. 13. 7-14

Սամուէլ ըսաւ  
Սաւուղիհն.–  
«Յիմարութիւն ըրիր, որ  
քու Տէր Աստուծոյդ  
քեզի պատուիրած  
պատուիրանքը  
չպահեցիր»:  
–Ա. Թագ. 13. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ԱԷՋ  
■ Յոբ 11-13  
■ Գործք 9. 1-21

ատկէ աւելի մեծ հարց մը կար: Երբ կապարն ու զինկը մեծ հարստութիւն կը բերէին, միւս կողմէ պատճառ կը դառնային օղին ապականութեան: Հետզհետէ Փիչըր նկատուեցաւ թունաւոր աղտոտութեանց վայր մը եւ պետութիւնը արգիլեց բնակութիւն հաստատել այնտեղ:

Փիչըրի պատահածը կրնայ պատահիլ նաեւ մարդոց: Տնտեսական բարգաւաճումներ այնքան ճիշդ կ'երեւան, որ դժուար է հաւատալ թէ կրնան անհետանալ: Արարքներ, որոնք վնասակար են մեր հոգեւոր առողջութեան, եթէ երկար ատեն առանց սրբազրութեան մնան, կը տանին կործանումի: Սաւուղ թագաւոր սկսաւ որպէս բարի թագաւոր, սակայն յաջողութիւն փնտռելու իր աշխատանքին մէջ, չնկատեց իր կատարած վնասները: Աստուծոյ պատուէրներուն կռնակ դարձնելով յիմարական գործեր ըրաւ եւ կորսնցոյց իր թագաւորութիւնը (Ա. Թագ. 13. 13-14):

Աստուածպաշտութեամբ ապրիլը միշտ կը յաղթահարէ թունաւոր ապրելակերպին:

**Մ**իացեալ Նահանգներու Օքլա-  
հոմա նահանգի Փիչըր քաղա-  
քը իր 20,000 բնակչութեամբ բազ-  
մազբաղ եւ տնտեսապէս բարգաւաճ  
էր ատենօք: Սակայն 2009-ի կէսէն  
ետք դադրեցաւ գոյութիւն ունե-  
նալէ: 1900-ական թուականներու  
սկիզբը, մեծ թիւով գործաւորներ  
կ'աշխատէին քաղաքի հանքերուն  
մէջ եւ դուրս բերուած կապարի եւ  
զինկի մետաղները կը գործածուէին  
զինելու Միացեալ Նահանգները՝  
համաշխարհային երկու պատերազմ-  
ներու ընթացքին:

Գիւղաքաղաքը սկսաւ տկարա-  
նալ երբ հանքը սկսաւ հետզհետէ  
պակսիլ եւ վերջ գտնել: Սակայն

Ոչ ոք իսկապէս յաջողութիւն կրնայ գտնել առանց  
Աստուծոյ:

## Պօղոսի Սիրտը

Կարդա՛  
Փիլիպ. 1. 12-21

Կատարեալ համարձակութեամբ, ինչպէս ամէն ատեն՝ նոյնպէս հիմա ալ, Քրիստոս իմ մարմինն մէջ պիտի փառաւորուի, թէ ապրելովս եւ թէ մեռնելովս: — Փիլիպ. 1. 20

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱՒԿ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԶ

■ Յոբ 14-16

■ Գործք 9. 22-43

գտնուին: Կարեւորը անոր սիրտն է, որ կ'ապրի մինչեւ այսօր Նոր Կտակարանի իր նամակներուն մէջ:

Երբ Առաքեալը բանտարկուած էր Հռովմի մէջ, ան գրեց Փիլիպպէի հաւատացեալներուն կեանքի իր նպատակին մասին: Ան ըսաւ. — «Իմ եռանդուն ակնկալութիւնս եւ յոյսիս համեմատ՝ թէ բնա՛ւ պիտի չամչնամ հապա՛ բոլորովին համարձակութեամբ, ինչպէս ամէն ատեն՝ նոյնպէս ալ հիմա, Քրիստոս պիտի մեծարուի մարմինիս մէջ, կամ կեանքով, կամ մահով, որովհետեւ ինծի համար ապրիլը Քրիստոս է ու մեռնիլը շահ» (Փիլիպ. 1. 20-21):

Երբ կը կարդանք Առաքեալին խօսքերը այսօր, անոնք կոչ ունին մեզի քննելու մեր սիրտերը: Արդեօք մենք ալ այսօր նոյնչափ խանդավառուա՞ծ ենք Քրիստոսով: Արդեօք մենք ալ նպատակ ըրա՞ծ ենք Զինք պատուել մեր ամէնօրեայ կեանքով: Խնդրենք Աստուծմէ, որ օգնէ մեզի, որպէսզի մենք ալ ձգենք յոյսի եւ քաջալերութեան կտակ մը կեդրոնացաւ՝ Յիսուս Քրիստոսի վրայ:

**Մեմֆ Քրիստոսի յանձնարարագիրն նամակներն ենք բոլոր անոնց համար, որոնք կը կարդան մեր կեանքերը:**

**Ե**րկար ատեն գոյութիւն ունեցող քրիստոնէական աւանդութեան մը համաձայն, Պօղոս Առաքեալ գլխատուած էր եւ թաղուած Հռովմի մէջ, շուրջ 67 թ-ին Ք.Ե.: 2009-ին գիտնականներ մասնաւոր քննութիւն մը կատարեցին գտնուած աճիւններուն վրայ եւ շատեր հաւատացին, թէ աճիւնները Առաքեալինն էին: Այդ ոսկորներուն վրայ կատարուած փորձերը կը հաստատէին թուականը ոսկորներուն՝ առաջին կամ երկրորդ դարէն մնացած, բայց անոր որուն ըլլալը բնորոշելը կը մնայ միշտ հարցական: Սակայն, հարց չէ, թէ Պօղոս Առաքեալին աճիւնները ո՞ր կը

## Ազատուած

Կարդա՛  
Կողոս. 1. 12-22

Որ մեզի ազատեց  
խաւարից իշխանու-  
թեանէն ու փոխադրեց իր  
սիրելի Որդիից  
թագաւորութեան:  
—Կողոսացիս 1. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յոբ 17-19  
■ Գործք 10. 1-23

տիրող եւ կը կանչէ իր ընկերներուն որ ետ գան: Տանտէրը կ'ըսէ:— «Շատ մօտ կեցած էի իրեն եւ աւազանին եզերքը: Երբ դանակը տեսայ արագօրէն հրեցի զինք եւ դարձեալ ինկաւ աւազանին մէջ: Բայց նորէն նկատեցի թէ մարդը խեղդուելու վտանգի մէջն է: Ուրեմն դարձեալ ջուրը ցատկեցի եւ ազատեցի զինք»:

Կողոսացիներու նամակին մէջ, Պօղոս Առաքեալ կը խօսի ուրիշ ազատումի մը մասին: Հայր Աստուած զիրենք ազատած էր խաւարի իշխանութենէն: Այդ փրկութիւնը պատահած էր Քրիստոսի մահով եւ նաեւ իրենց ապաշխարութեամբ: Երեւակայական այն պատկերը, որ Առաքեալը կը գործածէ (1. 12-13), կը թելադրէ, թէ հաւատացեալներ կը դառնան ազատ քաղաքացիները լոյսի թագաւորութեան:

Փրկութեան այդ հրաշալի շնորհքին որպէս անդրադարձ, պէտք է ցոյց տանք ուրախանալի երախտագիտութիւն եւ պաշտենք զԱստուած փառաբանութեամբ եւ խոր ակնածանքով (Եբրայեցիս 2. 28):

**Մեմֆ Քրիստոսի յանձնարարագիր նամակներն ենք բոլոր անոնց համար, որոնք կը կարդան մեր կեանքերը:**

**Հ**արաւային Ափրիկեցի մը շատ կը զարմանայ երբ երեկոյեան տուն կու գայ եւ կը տեսնէ ինը գողեր տունը մտած կը կողոպտեն: Գողերը ետեւի դռնէն կը փախչին: Կը վազէ անոնց ետեւէն, կը հասնի երկուքին եւ կը հրէ զանոնք ու կը ձգէ պարտէզի աւազանին մէջ: Երբ կը տեսնէ թէ անոնցմէ մէկը լողալ չի գիտեր եւ խեղդուելու վտանգի մէջ է, կը ցատկէ աւազանին մէջ եւ կ'ազատէ զայն: Դէպքը տեղեկագրող թերթը կ'ըսէր, թէ երբ գողը կ'ազատուի, աւազանէն դուրս գալով, թրջուած հագուստին գրպանէն կը հանէ խոշոր դանակ մը եւ կը սպառնայ զինք ազատող տան-